

ԼԵՎՈՆ ՊԱԼՅԱՆԻ «ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԱՅԵՐԸ
ՖՐԱՆՑ ՎԵՐՖԷԼԻ ՎԵՊԻՆ ՄԵՋ»
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱԼՅԱՆ

1940թ. Բուխարեստում լույս է տեսնում Լևոն Կարապետ Պալճյանի (Հետագայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջին)՝ «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (վերլուծական փորձ)» գրքույկը¹, որը 1970թ. հատվածաբար արտատպվում է «Հուշամատեան Մուսա լերան» ժողովածուում:² Ժողովածուի խմբագրությունն այս գիրքն անվանում է «ինքնատիպ և խորաթափանց վերլուծություն»:³ Ուսումնասիրությունը լույս է տեսել նաև Փարիզում՝ ֆրանսերեն լեզվով:

Լևոն-Կարապետ Արբախամի Պալճյանը (1908-1994) ծնվել է Բուխարեստում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի Միսակյան-Քեսիմյան ազգային վարժարանում: 1936թ. ավարտել է Բուխարեստի Պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը, 1937-ին՝ գործնական մանկավարժության բաժինը: 1936-1937-ին Բուխարեստում խմբագրել և հրատարակել է «Հերք» գիտա-հասարակական ամսագիրը, 1929-1943թթ. դասավանդել է Բուխարեստի հայկական դպրոցներում: 1943թ. Պալճյանն Աթենքում ձեռնադրվել է վարդապետ և նշանակվել Ռուսինիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահ, 1947-1955-ին՝ առաջնորդ: 1951-ից եպիսկոպոս էր: Պալճյանը հեղինակ է հայագիտական մի շարք ուսումնասիրությունների: 1991թ. ապրիլի 30-ին Վազգեն Առաջինն ընտրվում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, ակադեմիկոս:

* * *

Լ. Պալճյանի «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» ուսումնասիրությունը լույս է տեսնում այն ժամանակ, երբ սկսվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմը: Գերմանիայում մոլեզմում էր ֆաշիզմը, որը հակաֆաշիստական այլ գրքերի թվում արգելել և հրկիզել է նաև Վերֆելի վեպը:

1934թ. գիրքը գերմաներենից թարգմանվում է անգլերեն, ունենում չորս հրատարակություն: Ե. Տ. Անդրեասյանի թարգմանությամբ՝ «Հայկական հերոսապատում Մուսա լեռան 40 օրերը» վերնագրով, լույս է տեսնում Մոֆիայում: Ինչպես հայտնի է՝ վեպը գրելու համար Վերֆելը մոտ երեք տարի

Վիեննայի Մխիթարյանների մոտ ուսումնասիրել է հայոց պատմությունը ու մշակույթը, ծանոթացել փաստաթղթերին, զբուցել թուրքական կոտորածներից փրկված մարդկանց հետ:

Վեպը հնչեց որպես բռնակալության առջև չխոնարհվելու կոչ՝ ուղղված բոլոր ժողովուրդներին: Եվ ինչպես նշված է «Հուշամատեան Մուսա լեռան» ժողովածուում՝ Ֆ. Վերֆելն իր վեպով «...լավագույն ծառայութիւնը կմատուցանէ հայ ժողովրդին: Կարելի է անվարան ըսել թէ օտարներ հայ ժողովրդին կծանոթանան շնորհիւ այս վեպին: Հայ ժողովուրդը միայն խոր երախտագիտութիւն կըրնա տաձել դեպի այս մեծ մարդասէր գրագէտը»:⁴

Հանգամանորեն վերլուծելով Վերֆելի, ինչպես Պալճյանն է նշում՝ համաշխարհային համբավ ունեցող վիեննացի գրողի «Մուսա լեռան 40 օրերը» վեպը, այն համարելով հեղինակի գլուխգործոցը, Պալճյանը գրում է. «Հեղինակին մասին, մենք հայերս շատ բան չենք գիտեր: Գիտենք սակայն թե ան մեծ, անզուգական ծառայութիւն մը մատուցեց հայ ժողովուրդին: Ծառայութիւն մը՝ որուն համար հայ ժողովուրդը երբեք պիտի չկրնայ հաւասար չափով մը իր երախտագիտութիւնը հայտնել այս մեծ մարդուն՝ Ֆրանց Վերֆելին»:

Մեծ Եղեռնի մասին ոչինչ ունինք նոյնքան արժեքավոր, ինչքան այս վեպը: Չարմանալի է և սակայն իրական, թէ մեր գրագէտները եւ բանաստեղծները, որոնցմէ ոմանք նույնիսկ ապրած են այդ տարագրութեան սեւ օրերը, ցարդ չեն կրցած տալ պատկերը այն ողբերգութեան, զոր ապրեցաւ մեր ժողովուրդը:

Ճիշդ է, մեր յետպատերազմեան գրականութիւնը լեցուն է հիշողութիւններով, նկարագրութիւններով, և սակայն անկեղծ ըլլալու համար պէտք է խոստովանենք թե անոնք ոչ մէկ մնայուն արժեք կենրկայացնեն»:⁵

Բարձր գնահատելով Վերֆելի վեպը, որպես արվեստի բարձրարժեք գործ, Պալճյանը նշում է, որ միայն արվեստը կարող է դեպքերն անմահացնել, գիտե հավիտենական կենդանության զաղտնիքը, միայն արվեստը կարող էր տալ ճշմարիտ և իրականը: «Մենք, այո՛, Մեծ Եղեռնի մասին ունինք բազմաթիվ հիշողութիւններ, պաշտոնական փաստաթուղթեր, օտար վկայութիւններ, և սակայն այդ բոլորը կը տժգունին այն կենդանի գործին առաջ, որպիսին է Ֆրանց Վերֆելի ստեղծագործութիւնը»:⁶

Իր ուսումնասիրության հիմնական մասը Պալճյանը նվիրում է հայերի հայրենասիրությանը, նրանց բարոյական կերպարի բացահայտմանը, պատվի ու արժանապատվության նկարագրին:

«Անձնվեր կռիվները ապացուցում են, - գրում է Լ. Պալճյանը, - որ արեամբ կարելի է հնարատրին սահմանէն անդին անցնիլ, դէպի գերագույն կարելիութիւնների աշխարհը, և ատով ալ դեպի հավիտենականութիւն, դեպի անմահութիւն... Արեան գնով կկատարվի անհիմանալին. կուգա փրկութիւնը, իսկ հերոսներու գործը կարճանգրուի պատմութեան մեջ»:⁷ Պալճյանը նշում է, որ վեպի մթնոլորտը նաև մի գլուխ է կորցված ու վերագտնված աշխարհի, որ հիմա այնքան մտերիմ ու այնքան կենդանի է մեզ համար:

Վերֆելի գործը Պալճյանն անվանում է հոգեբանական մեծ վեպ, ոչ միայն կենդանի գործ նկարագրություններով ու կերպարներով, այլև՝ նրանց ազգային հոգեբանության ճշմարիտ իմացությամբ: «Վեպը, - գրում է Պալճյանը, - ապրող և գործող հոգիներու աշխարհ մըն է: Վերֆել իրապես

մեծ է, ճշմարիտ հոգիներ ստեղծելու մեջ: Կասկած պետք չէ ունենալ թե ան, գրական տաղանդին կողքին բացառիկ հնարատրությունը ունի հոգիներ ճանաչելու և հասկանալու: Ֆ. Վերֆելը մեծ հոգեբան մըն է ու իր վեպը կառուցած է կենդանի հոգիներով:

«Մուսա լեռան 40 օրերը» կապրի և պիտի ապրի հեղինակին ստեղծած տիպարներով, որոնք հարազատ մարդեր են, հարազատ հայ մարդեր, կամ հարազատ թուրք մարդեր:

Յիրավի անհավատալի կը թուի թե օտար գրագետ մը այսքան խոր և կատարյալ ձեռով ճանաչած ու հասկցած է հայուն հոգին, մինչև յետին մանրամաստությւններն ու նրբությւնները:

Համաշխարհային գրականության մեջ մեծ գրագետներն քիչերը միայն կրցած են ժողովուրդի մը հոգին ապրեցնել իր բոլոր խորությւններով, բարդությւններով ու հակասությւններով, ինչպես Ֆ. Վերֆելը հայ ժողովուրդի գանազան տիպարները կապրեցնել վեպին մեջ:

Տոստոեսկիի մասին, որ հոգեբանական վեպին մեծագույն վարպետն է, Շթեֆան Չվայկ կ'ըսէ՝, եթե զայն կարդաս ինքզինքդ ավելի լավ կը ճանչնաս ան որպես մարդ: Առանց չափազանցնելու կարելի է ըսել, թե Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» կարդալով ինքզինքնիս ավելի լավ կը ճանչնաք՝ իբրև հայ»:⁸

Լ. Պալճյանն իսկական հայ էր համարում իր հայրենիքին, հավատին անսահմանորեն նվիրված, հայ ժողովրդի ազատագրության համար պայքարող մարտիկներին. որպես այդպիսի հայերի օրինակ նա բազմիցս վկայակոչում է մուսալեռցիներին, նրանց ինքնապաշտպանությունը: «Ապրիլի 24-ին» վերնագրով հոդվածում, որը տպագրվել է իր խմբագրած «Հերք» հանդեսի 1938թ. ապրիլյան համարում, որպես առաջնորդող Պալճյանը գրել է. «Մուսա լեռի ժողովուրդը փրկուեցավ, որովհետև գիտցաւ միաբանիլ, կարգապահ ըլլալ, կազմակերպվիլ ու չյուսահատիլ մինչև վերջին կաթիլը ուժին»:

Այդ յոյսի, հաւատքի և պայքարի ժողովուրդը փրկուեցավ... Մենք ևս կը հավատանք փրկութեան: Փրկութեան նավը կուգա, կը բավէ որ հավատանք ու տոկանք... «Մուսա լեռը» մեզ կներշնչէ ու հավիտեան պիտի ներշնչէ... Որովհետև ան առասպել դարձած, մեր ժողովրդի հոգիին հրաշքներեն մին է... Որովհետև ան ապացույցն է, թե հայ հոգիին մեջ կա բան մը այն աներևույթ իրականութենեն որ է «անիմանալիի մեջ և վեր քան զմեզ...»:⁹

Պալճյանը գրական և հոգեբանական վերլուծության է ենթարկում վեպի դրական, ինչպես նաև բացասական տիպերը, տալիս նրանց գնահատականները:

Նա հատկապես ընդգծում է վեպի ճանաչողական նշանակությունը գաղութահայ երիտասարդության համար, որը, ինչպես ինքն է նշում, տառապում է հոգեկան անբավականությունից և այդքան անժանոթ է հայի հոգու հարազատ գծերին: Վերֆելի գործը, ինչպես նշում է Պալճյանը, խորը հավատով է տոգորված հայերի բարոյական ուժերի նկատմամբ: Այն որպես բարձրարժեք ուսումնասիրություն կոչում է ընթերցողներին հավատալ հայրենիքի ապագային, հպարտանալ հայ լինելու համար:

Հանգամանորեն վերլուծելով Վերֆելի վեպի մեջ պատկերված հայերի կերպարները, Պալճյանն ընդհանրացնում է. «Այո՛, բոլոր հայերը, թաքուն կերպով իրենց մեջ ունին ազգային հավաքականութեան մեծ արժա-

նիքները, ու Ֆ. Վերֆելի իր վեպին մեջ այդ է, որ կապացուցանե աշխարհին»:¹⁰

Իր խոսքն ուղղելով գաղութահայերին, առանձնապես երիտասարդությանը, Պալճյանը կոչ է անում լավ ճանաչել բուն հային, հարազատ հային, Վերֆելի վեպի հերոսների մեջ գտնել իրենց իդեալին, որը կշարժի և կարթնացնի իրենց հոգիներում մի նոր ճառագայթ:

«Եւ այս վտանգի ու երկունքի օրերուն, երբ բոլոր ժողովուրդները իրենք իրենց մեջ կը փակուին և կը խորանան, ինքզինքնին կը փնտրեն՝ իրենց խորունկ արմատները գտնելու եւ այնտեղէն քարոյ ու անմեռ ուժեր ստանալու համար, Վերֆելի ահա մեզի կընծայէ վեպ մը, ուր մենք այդ բոլորը կը գտնինք գրեթէ պատրաստ: Կը մնայ, որ գիտնանք զանոնք ճանաչել ու արժեցնել:

Ինչ որ ալ ըսվի, ինչ որ ալ պատահի, հայ ժողովուրդը, հայ հայրենիքս, այս երկունքն ալ պիտի անցնէ ու ինչպէս միշտ, այս անգամ ալ պիտի իրականանայ «առ անհմանային ի մեզ եւ վեր քան զմեզ»:¹¹

Պալճյանը լիառիւս է, որ հայ ժողովուրդը ժամանակի երկունքն էլ կհաղթահարի, «...որովհետեւ եթէ դժբախտութիւնը և մարտիրոսութիւնը հայ ժողովուրդի ճակատագիրն է, պէտք է լավ գիտենանք, որ տոկալն ու հաղթահարելն ալ, ապրիլն ալ անոր ճակատագիրն է»:¹² Եվ որպէս ուսումնասիրության եզրակացություն Պալճյանն ընդգծում է. «Հավատք հայ մարդու բարոյական ուժերուն վրա: Հավատք հայրենիքի ապագային վրայ: Եւ հպարտութիւն հայ ըլլալնուս համար»:¹³

Պալճյանի բոլոր աշխատություններն էլ («Անձնավորության գաղափարի մասին», «Ճերմիւսյան Հայրիկ որպէս դաստիարակ», «Ս. Գրիգոր Նարեկացի») և այլն) տողորված են խոր հավատով հայ ազգի հերոսության, տոկունության և լավատեսության նկատմամբ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Պալճյանն աջակցում էր ֆաշիզմի դեմ մարտնչող առաջադեմ ուժերին, օգնում Ռուսիոյ հայուհի գտնվող համակենտրոնացման ճամբարներում տառապող հայ ռազմիկներին, ռուսահայության մեջ բորբոքում էր հայրենասիրական զգացմունքներն ու ազնիվ խոհերը Սայր հայրենիքի նկատմամբ: 1943թ. սեպտեմբերի 30-ից Պալճյանն արդեն հոգևորական էր՝ Վազգեն անունով: Շատ չանցած նա ռուսահայաց թեմակալ առաջնորդն էր, իսկ 1950թ. սեպտեմբերի 30-ին նա ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս: Նրա հայրապետական կոնցրակներում և քարոզներում մշտապես հնչում է անհատի բարոյական կատարելության, նրա քաղաքացիական պարտականությունների, հայրենի հողի ու ավանդների նկատմամբ սիրո և հավատարմության, մայրենի լեզվի պահպանության, խաղաղության հորդորներն ու կոչերը: «Միայն բարի ու արդար գործի և ստեղծագործ շինարար աշխատանքի ճամբուն վրա է, որ մարդ կզգա արարչական ուժերու զարդուն իր մեջ», - քարոզում է Վազգեն Առաջինը: Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված դեպքերի պատասխանատու օրերին Վազգեն Առաջինը հանդես է գալիս հայ ժողովրդի արդարացի պահանջների հետևողական ու ջերմ պաշտպանությամբ՝ ժողովրդի ճակատագրի նկատմամբ պատասխանատվության խոր զգացումով:

Ամենայն Հայոց կաթողիկոսը կոչ էր անում Ավարայրի ու Մարդարապատի, Մուսա լեռան դյուցազունների ճանապարհով ընթանալ, նրանց մեջ տեսնել հայոց պատմության հերոսական տրամաբանությունը:

«Մուսա լեռան 40 օրերը» վեպը, ինչպես կանխատեսում էր Վեհափառը, պատմական ու գործնական մեծ նշանակություն ունեցավ: Այն դարձավ ամեն մի հայրենասեր հայի սեղանի գիրք և՛ Հայաստանում, և՛ սփյուռքում:

Լևոն Պալճյանի ուսումնասիրությունն այդ վեպի մասին 1987թ. թարգմանվեց ռուսերեն և խմբագրության առաջաբանով տպագրվեց Մոսկվայում լույս տեսնող «Դրուժբա Նարոդով» ամսագրում:¹⁴

«Դրուժբա Նարոդով» հանդեսը, ռուսերեն թարգմանությամբ տպագրելով «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» ուսումնասիրությունը, խմբագրականում նշում էր, որ Վազգեն Առաջինի հումանիստական գաղափարներն այսօր էլ հետաքրքրություն են ներկայացնում, նրա շատ գաղափարներ արդիական են, իսկ հիմնական դրույթներն՝ ուշադրության արժանի մահ ժամանակակից ընթերցողի համար:¹⁵ Վազգեն Առաջինը, նշված է խմբագրականում, խորապես համոզված էր, որ աշխարհի բարօրությունը մարդկանց միասնության մեջ է: Հանդեսը տպագրել է մահ խմբագրության հարցազրույցը Վազգեն Առաջինի հետ, որում Վազգեն Առաջինն ընդգծել է, որ Ֆրանց Վերֆելի վեպն ընդմիշտ կապրի և իր արդիականությամբ ու գեղարվեստական բարձր արժանիքով կհիշեցնի ապագա սերունդներին, որ հայերի հետ տեղի ունեցած ողբերգությունը չպետք է կրկնվի:¹⁶

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Պալճյան Կ. Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (Վերլուծական փորձ), Պուրքեշ, 1940, 62 էջ:
- ² Տե՛ս Լևոն Կարապետ Պալճյան. Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ, «Յուշամատեան Մուսա լեռան», խմբ. Մարտիրոս Գուշագենյան եւ Պողոս Սատուռեան, Պէլրուք, 1970, էջ 633-638:
- ³ Տե՛ս նույն տեղում, էջ 633:
- ⁴ «Յուշամատեան Մուսա լեռան», էջ 602:
- ⁵ Նույն հրատ., էջ 633:
- ⁶ Նույն տեղում:
- ⁷ Նույն հրատ., էջ 635-636:
- ⁸ Նույն տեղում, էջ 636:
- ⁹ «Հերկ», Պուրքեշ, 1938, ապրիլ, թիւ 11, էջ 2:
- ¹⁰ «Յուշամատեան Մուսա լեռան», էջ 637:
- ¹¹ Նույն հրատ., էջ 638:
- ¹² Նույն տեղում:
- ¹³ Նույն տեղում:
- ¹⁴ Տե՛ս Карапет Палджян. Армяне Муса-дага в романе Франца Верфеля. Аналитический опыт, "Дружба народов", 1987, N 8, с. 227-234:
- ¹⁵ Տե՛ս Васкен Первый, Католикос Всех Армян. Благо мира – в людском единении. - "Дружба народов", 1987, N 8, с. 220-223:
- ¹⁶ Տե՛ս Беседа Католикоса Всех Армян Васкена Первого с корреспондентами "ДН". - "Дружба народов", 1987, N 8, с. 224-226: